Հաստատում եմ՝

Հայաստանի Հանրապետության

պետական կառավարման

ակադեմիայի ռեկտոր

ԽԱՉԱՏՈՒՐ ՂԱԶԵՅԱՆ

«__30__»_____08_____ 2022 թ.

ԿԱՐԾԻՔ

(առաջատար կազմակերպության)

ԻԳ.00.01-«Քաղաքական գիտության տեսություն» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Փայլակ Աշոտի Ենգոյանի « «Փափուկ ուժի» գործոնը Չինաստանի արտաքին քաղաքականության հայեցակարգում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Հաստատվել է

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի «Քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության» ամբիոնի 2022թ. օգոստոսի 30–ի նիստում: Նիստին մասնակցում էին քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Մ. Մ. Մարգարյանը, քաղ. գիտ. թեկնածու, ԱՄՆ Պրիստոնի համալսարանի շրջանավարտ Ռ. Էլամիրյանը, քաղ. գիտ. թեկնածու, Մ. Արսենյանը, քաղ. գիտ. թեկնածու, դոցենտ Մ. Մարգարյանը, պատ. գիտ. թեկնածու Ա. Տեր- Գրիգորյանը,քաղ. գիտ. թեկնածու Բեդրոս Չավիկողլին, քաղ. գիտ. թեկնածու Մ. Մարգարյանը, ասիստենտ Լ. Նիկողոսյանը: Մասնակցում էին նաև ասպիրանտներ Ա. Հարությունյանը, Հ. Փայտյանը, Ս. Ղահրամանյանը, Ֆ. Նիկողոսյանը, Գ. Պողոսյանտ :

Փայլակ Աշոտի Ենգոյանի « «Փափուկ ուժի» գործոնը Չինաստանի արտաքին քաղաքականության հայեցակարգում» ատենախոսության թեման խիստ արդիական է, քանի որ հնարավորություն է ընձեռում մի կողմից ուսումնասիրելու «փափուկ

ուժի» հայեցակարգի հիմնախնդրի դրսևորման առանձնահատկությունները՝ արդի արտաքին քաղաքականության կառուցակարգում, մյուս կողմից՝ կարևորելու դրա գործառումը համաշխարհային քաղաքականության տարաբնույթ սուբյեկտների կողմից՝ որպես «խելամիտ ուժի»: Գնահատելի է այն, որ այդ բարդ տեսական երևույթի կիրառելիության ապազգաբանական հիմնախնդիրները վերլուծված են Չինաստանի ժողովրդական Հանրապետության բնականոն արդիականացման գործընթացների էության և բնույթի բացահայտման հիմքի վրա: Այս դիտանկյունից թեմայի հետազոտության շրջանակներում լուսաբանված է ՉԺՀ-ի արտաքին քաղաքականության հայեցակարգի ռազմավարության քաղաքակրթական չափումը: Հիմնավորելով համաշխարհային ինտեգրացիոն գործընթացներին պետության ինստիտուտի ներգրավվածության գերակայության անհրաժեշտությունը՝ ատենախոսությունում հատուկ կարևորված է գլոբալ աշխարհաքաղաքական գործընթացներում ՉԺՀ-ի ակտիվացումը որպես «ուժային բևեռի»: Այդ կարգավիճակում իր դիրքերի ամրապնդման նպատակով Չինաստանը որդեգրել և լայնորեն կիրառում է զարգացած երկրներին հաջողություն ապահոված «փափուկ ուժի» քաղաքականությունը: Սակայն, ՉԺՀ - ն գործնականում հարատև կատարելագործում է այդ քաղաքականության գործիքները՝ ոչ միայն օգտագործելով իր քաղաքակրթության բնութագրիչները, այլև «խելամիտ ուժի» միջոցով բարձրացնում է իր մրցունակությունը: Դա հնարավորություն է տվել, որպես այլընտրանք հայտ ներկայացրել արևմտյան աշխարհին՝ ընդարձակելով իր ՏԵՂՆ ու ԴԵՐԸ՝ դառնալ գլոբալ կառավարման դերակատար: Նմանօրինակ մոտեցումը հնարավորություն է տալիս բազմամակարդակ ուսումնասիրել «փափուկ ուժի» մասնակցության հիմնախնդիրը նաև ներազգային բազմաթիվ խնդիրներ լուծելիս՝ ազգի համախմբվածությունն ապահովելու և նրա ինքնությունը բնականոն արդիականացնելու նպատակով: Արժեքավոր է նաև այն մոտեցումը, որ ատենախոսությունում ՉԺՀ- ի փորձի կիրառելիությունը կարևորված է ինչպես ՀՀ-ի, այնպես էլ բոլոր այն երկրների համար, որոնք քաղաքական զարգացման գործընթացում բախվել են ոչ միայն ինքնիշխանության պահպանման խնդրին, այլև հայենիք - Սփյուռք, Սփյուռք - ընդունող պետություններում էթնիկ համայնքների ուծացման սպառնալիքին: Այս դիտանկյունից հատուկ ուսումնասիրված է այն, որ

ՉԺՀ-ի «փափուկ ուժի» քաղաքականությունը նպատակաուղղված օգտագործում է չինական սփյուռքը՝ իր երկրի հեղինակությունը համաշխարհային ասպարեզում բարձրացնելու և իր հարաբերությունները բազմաթիվ պետությունների հետ արժանապատիվ կառուցելու նպատակով:

Ատենախոսության արդիականությունը պայմանավորված է նաև Չինաստանի արտաքին քաղաքական գործունեության կառուցվածքում «փափուկ ուժի» փորձի բազմամակարդակ կիրառելիության ուսումնասիրության հիմնավորմամբ, որը թույլ կտա Սփյուռք ունեցող երկրներին, այդ թվում ՀՀ-ին, մշակել սփյուռքի հետ փոխգործակցության արդյունավետ ուղիներ:

Ատենախոսության նպատակներն են՝ գիտական նորագույն մոտեցումների հիման վրա ուսումնասիրել Չինաստանի արտաքին քաղաքականության ռազմավարության շրջանակներում «փափուկ ուժի» կիրառման տեսական-հայեցակարգային հիմնախնդիրները, քաղաքական փոփոխությունների գործընթացի բազմաչափության հիմնավորմամբ ներկայացրնել Չինաստանի «փափուկ ուժի» քաղաքականությունը «խելամիտ ուժի» վերաճելու վրա հիմնված քաղաքականության գործընթացում: Միևնույն ժամանակ բացահայտել Չինաստանի «փափուկ ուժի» կիրառման օպտիմալ ձևերը, որոնք կարող են կիրառվել ՀՀ-ի արտաքին քաղաքականության մեջ:

Այս համատեքստում հեղինակին հաջողվել է բացահայտել «փափուկ ուժի» կիրառման տեսական և հայեցակարգային հիմնախնդիրների առանձնահատկություններն ու Չինաստանի «փափուկ ուժի» քաղաքականությունը «խելամիտ ուժի» վերաճելու համատեքստում: Միևնույնն ժամանակ հեղինակը կարողացել է հիմնավորել զարգացող երկրներում այդ փոփոխության կարևորությունը՝ ռազմավարական կառավարում իրականացնելու նպատակադրմամբ: Հատկապես գնահատելի է այն, որ հեղինակին հաջողվել է արժևորվել «փափուկ ուժը» ոչ միայն որպես բնականոն արդիականացման ինստիտուցիոնալացման ու համագործակցային մշակույթի զարգացման գործոն, այլև որպես ազգային, քաղաքական և քաղաքացիական ինքնությունների փոխկապվածության պատասխանատու:

Վերոհիշյալ մոտեցումների համատեքստում սույն թեկնածուական ատենախոսությունն արդիական և ավարտուն գիտահետազոտական աշխատանք է, որում հեղինակը գիտական պատշաճ մակարդակով ուսումնասիրելով «փափուկ ուժի» գործոնը Չինաստանի արտաքին քաղաքականության հայեցակարգում, միևնույն ժամանակ վերլուծել է «ուժ» հասկացության տարբեր մոտեցումները քաղաքական մտքի ինչպես էվոլյուցիոն, այնպես էլ հեղափոխական զարգացման շրջանակներում:

Գնահատել է այն, որ հեղինակը, նկատի ունենալով թեմայի բազմաշերտությունը, կիրառել է գիտական վերլուծության համալիր, պատմահամակարգային, սոցիոմշակութային, համեմատական և գործառական մեթոդները: Աշխատանքում որոշիչ դեր է խաղացել համակարգային մեթոդը, որի օգնությամբ դիտարկվել է Չինաստանի «փափուկ ուժի» քաղաքականությունը որպես ամբողջական համակարգ: Պատմականության սկզբունքը թույլ է տվել հեղինակին բացահայտել չինական քաղաքակրթության կենսունակությունը և համալիր ներկայացնել երկրի արտաքին քաղաքականության հայեցակարգի փոխակերպումների էությունը, ինչպես նաև հիմնավորել «փափուկ ուժի» քաղաքականության սկզբունքների ձևավորման նախադրյալները: Համեմատական մեթոդը թույլ է տվել վեր հանել չինական դիվանագիտության մոտեցումների նմանություններն ու տարբերությունները բազմաթիվ երկրների արտաքին քաղաքականության հետ, որոնք ևս դիմում են «փափուկ ուժի» քաղաքականությանը: Տարբեր մեթոդների զուգամիտմամբ ատենախոսությունում հաջողված ներկայացված է «փափուկ ուժի» գործառութային բազմաչափությունը, որի օգնությամբ էլ կարևորված է մշակութային-քաղաքակրթական ցանցային տարածությունը որպես սփյուռքի ինստիտուտի կենսունակության ապահովման պայման: Այս մոտեցումը հեղինակին հնարավորություն է տվել բազմակողմանի վերլուծել չինական «փափուկ ուժը» գործառնական տեսանկյունից և բացահայտել այդ քաղաքականության ռազմավարության հիմքերը:

Ատենախոսության մեջ «փափուկ ուժի» կիրառման քաղաքականությունը տեսականորեն արժևորվում է քաղաքարթական մոտեցմամբ: Այս շրջանակներում «փափուկ ուժի» էվոլյուցան անցյալ - ներկա - ապագա եռաչափ՝ ժամանակի մեջ

ուսումնասիրումը թույլ է տալիս ոչ միայն վարել արդյունավետ արտաքին քաղաքականություն, այլև, մերժելով մեխանիկական նույնականացումը, հաղթահարել «ինքնության ճգնաժամը»: Արդի քաղաքական գիտության կառուցվածքում գերակա է նշված երևույթների հայեցակարգային վերլուծությունը: Հետևաբար ատենախոսության առանցքային դրույթները կարող են կիրառվել թեմայի հետագա գիտական մշակվածության և գիտակրթական հետազոտությունների ուսումնասիրման ժամանակ:

Աշխատանքի գործնական արժեքը «փափուկ ուժի» համակողմանի և ցանցային ուսումնասիրությունն է, նաև նրա զարգացման արդի մեխանիզմները գնահատելու և ՀՀ-ում այն բազմամակարդակ կիրառելու հեռանկարները:

Ատենախոսության ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել երկրների արտաքին քաղաքականության և ազգային անվտանգության ռազմավարությունների մշակման և կատարելագործման ընթացքում, ինչպես նաև բարձրացնել այդ ոլորտները ներկայացնող կառույցների գործունեության արդյունավետությունը:

Ատենախոսությունը համակարգված և ամբողջական գիտական ուսումնասիրություն է, որը հեղինակը կատարել է ինքնուրույն և բարձր մակարդակով:

Աշխատանքը պարունակում է առաջարկված խնդիրների համապարփակ լուծում:

Հետազոտությունն ունի հարուստ գիտական և աղբյուրագիտական հենք, օգտագործվել են գլոբալ և գլոկալ մակարդակներում «փափուկ ուժը» ուսումնասիրող հեղինակների մի շարք մենագրություններ և հոդվածներ, «խելացի ուժի» ֆունկցիոնալ վերլուծության համար անհրաժեշտ գիտավերլուծական նյութեր, պետական պաշտոնական այլ կառույցների կողմից ընդունված/հրապարակված փաստաթղթեր:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից /ութ ենթագլուխներից/, եզրակացությունից, գրականության ցանկից:

Ատենախոսության եզրահանգումները գիտական են և օգտակար Հայաստանում քաղաքական գիտությունների հետագա զարգացման համար: Ուսումնասիրության արդյունքում կատարվել են ոչ միայն հայեցակարգային բնույթի

եզրահանգումներ և հետևություններ, այլև մշակվել են մի շարք պրակտիկ առաջարկություններ «փափուկ ուժի» քաղաքակրթական սկզբունքները սինթեզելու, և զարգացման գործընթացերը խոչընդոտող մի շարք գործոնների չեզոքացման ուղղությամբ: Ուսումնասիրության արդյունքում ստացած եզրահանգումները, հետևություններն ու ընդհանրացումները ունեն ինչպես տեսական, այնպես էլ կիրառական մեծ արժեք: Ատենախոսության սեղմագիրը և հոդվածները համապատասխանում է ատենախոսության հիմնական օրինակի բովանդակությանը:

Ատենախոսության հիմքում դրված գիտական կանխավարկածը նորույթ է հայ իրականության համար այն առումով, որ «փափուկ ուժի» գործառման հիմնախնդիրը հիմնավորվել է որպես քաղաքակրթական արժեքաբանության տիրույթներում ինստիտուցիոնալ զարգացման կարևոր պաման: Այս հանգամանքը հիմք է տալիս եզրակացնելու, որ հեղինակի հրապարակային պաշտպանության դրված ատենախոսությունը լիովին համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից նմանօրինակ աշխատանքներին ներկայացվող պահանջներին: Այնուհանդերձ անհրաժեշտ ենք համարում նշել, որ Փայլակ Ենգոյանի ատենախոսությունը ավելի կշահեր, եթե հեղինակը նկատի ունենար մեր կողմից առաջարկվող դիտողությունները.

1. Աշխատանքի առաջին «Փափուկ ուժի» հայեցակարգի տեսամեթոդական հիմքերը» գլուխում հեղինակը քննարկել է «փափուկ ուժի» էությունը և դրա իրագործմանը վերաբերող հայեցակարգերը, ինչպես նաև շեշտադրած բացահայտել է չինական մոտեցումը՝ «փափուկ ուժը» դիտարկելով ոչ միայն որպես արտաքին, այլև ներքին քաղաքական խնդիրների լուծմանն ուղղված գործիք: Կարծում ենք, աշխատանքը կշահեր, եթե հեղինակը «Փափուկ ուժը» դիտարկեր որպես քաղաքական արդիականացման և զարգացման խաղային տրամաբանության (խաղերի տեսություն) գործընթացի պատասխանատու: Դա հնարավորություն կտար հեղինակին համեմատության մեջ բացահայտել ոչ միայն «փափուկ ուժի» կողմից իրականացվող «փորձի - սխալի» և «գիտավերլուծական» կառավարման հարացույցների մոդելային տարբերությունները, այլև նրա գործառման ժամանակ առաջացած գլոբալ և գլոկալ օլիգարխիկ կառույցներին անդամագրվելու հնարավոր գայթակղությունները:

2. Ատենախոսության երկրորդ՝ «Փափուկ ուժը» որպես Չինաստանի արտաքին քաղաքականության ռազմավարության կարևոր բաղադրիչ» գլխում հեղինակը ակադեմիական բարեխղճությամբ հանգամանալից ներկայացրել է Չինաստանի արտաքին քաղաքականության հայեցակարգի կայացման գործընթացը և «փափուկ ուժի» դերը ինչպես Չինաստանի արտաքին, այնպես էլ ներքին քաղաքական ծրագրերի իրականացման գործում: Կարծում ենք, աշխատանքը կշահեր, եթե հեղինակը «ընդհանուր շահերի հանրույթ» հայեցակարգի շրջանակներում տարբերակեր «փափուկ ուժի» կառուցվածքային բազմաշերտությունը: Դա հնարավորություն կտար հեղինակին հատուկ անրադառնալ ռազմավարական էլիտային, որի բացակայության պայմաններում քաղաքական համակարգը ոչ միայն հավասարարժեք չի արձագանքում մարտահրավերներին, այլև մարտահրավեր չի նետում: Բացի դրանից ռազմավարական էլիտան, վարելով գերշահույթի և մենաշնորհի կանխման քաղաքականություն, պատասխանատու է հարատև փոփոխության, ազգային գաղափարի զարգացման և նոր հանրային քաղաքականության սկզբունքների ներդրման համար:

3. Նկատի ունենալով թեմայի զարգացման հրամայականները՝ ցանկալի կլիներ, որ հեղինակն ուսումնասիրեր նաև նոր հանրային քաղաքականության սկզբունքների ներդրման ինստիտուցիոնալ հիմնախնդիրները: Դա հնարավորություն կտար արդյունքի և ապագայի կառավարման առումով մշտադիտարկել «փափուկ ուժի» կողմից քաղաքական որոշումների ընդունման, քաղաքական օրակարգի ձևակերպման և վիճահարույց հարցերի քննարկման կառուցակարգերը: Ենթադրվում է, որ այդ միջոցով հնարավոր է նաև հասարակական կարծիքի ուսումնասիրում իրականացնել՝ հիմնված «փափուկ ուժի» տարբեր խմբերի միջև նպատակաուղղված ծավալվող փոխհամաձայնության դիսկուրսի վրա:

4. Աշխատության մեջ առկա են որոշակի տեխնիկական բացթողումներ և թերություններ:

Նշված թերությունները չեն նվազեցնում աշխատանքի ամբողջական գիտական արժեքը:

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի «Քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության» ամբիոնը որպես առաջատար կազմակերպություն գտնում է, որ Փայլակ Աշոտի Ենգոյանի « «Փափուկ ուժի» գործոնը Չինաստանի արտաքին քաղաքականության հայեցակարգում» թեմայով ատենախոսությունը լիովին համապատասխանում է ԻԳ.00.01- «Քաղաքական գիտության տեսություն» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու ատենախոսություններին առաջադրվող պահանջներին և այն երաշխավորվում է հրապարակային պաշտպանության:

Եզրակացությունը հաստատվել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի «Քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության» ամբիոնի *2022 թ. օգոստոսի 30-ի նիստում:*

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի վարիչ քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր _____ Մ. Մ. Մարգարյան

Քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մ. Մարգարյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական քարտուղար
հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ _____ Ս. Պողոսյան

«30» 08. 2022 թ.